

<<ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 3 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>>

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ

Ք. Սիսիան, Շիրվանգաղե 4ա

Հեռախոս (0283) 2-39-23

Էլ. Փոստ tiv3nuh@sisian.am

„ 03,, հոկտեմբերի 2022թ.

Թիվ 5


ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՊԱՐՈՆ Ա. ՀԱԿՈԲՁԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հակոբյան

Տեղեկացնում ենք Ձեզ, որ <<Սիսիանի համայնքի թիվ 3 ՆՈՒՀ>> ՀՈԱԿ-ում ունենք դաստիարակի 3/երեք/ թափուր հաստիք, որից 2 /երկու/ դաստիարակի թափուր հաստիք ք. Սիսիանի ՆՈՒՀ-ում՝ 0.625-ական դրույք, 1 /մեկ/ դաստիարակի թափուր հաստիք Տորունիք բնակավայրի գործող խառը տարիքային խմբում՝ 0.5դրույք:

Լ. Հակոբյան



ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 3 ՆՈՒՀ» ՀՈԱԿ-Ի ԵՎ ՀՈԱԿ-ԻՆ ԿԻՑ ԳՈՐԾՈՂ ՏՈՐՈՒՆԻՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԽԱՌԸ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Սյունիքի մարզի «Սիսիանի համայնքի թիվ 3 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝ նախադպրոցական ուսումնական հաստատության և ՀՈԱԿ-ին կից գործող Տորունիք բնակավայրի խառը տարիքային խմբի դաստիարակների թափուր պաշտոնների համար՝ 0,625-ական դրույքաչափով:

Մրցույթին կարող է մասնակցել հաստատության տվյալ թափուր պաշտոնին ՀՀ ԿԳ նախարարի 2011 թվականի ապրիլի 26-ի N416-Ն հրամանով սահմանված տարիֆատրակավորման պահանջներին համապատասխանող անձը (հղում՝ <https://escs.am/am/news/4652>):

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- 1) դիմում (Ձև 1),
- 2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ),
- 3) անձը հաստատող փաստաթուղթ,
- 4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում),
- 5) ինքնակենսագրություն (Ձև 4),
- 6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
- 7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- 8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական,
- 9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Մրցույթն անց է կացվելու 2022 թվականի նոյեմբերի 3-ին՝ ժամը 10:30-ին, ք. Սիսիան, Շիրվանզադե 4ա հասցեում: Փաստաթղթերը պետք է ներկայացնել անձամբ՝ անձը հաստատող փաստաթղթով: Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 8:30-ից մինչև 17:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետն է 2022 թվականի հոկտեմբերի 28-ը ժամը 17:00-ը: Մրցույթն անց է կացվելու 2 փուլով՝ գրավոր և բանավոր:

Հարցաշարին ծանոթանալու համար անցնել հետևյալ հղումով՝ <https://escs.am/am/news/11978>:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 028323923 հեռախոսահամարով կամ այցելել «Սիսիանի համայնքի թիվ 3 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ (հասցե՝ ք.Սիսիան, Շիրվանզադե 4ա, հեռ.՝ 028323923:

Էլ. փոստ՝ tiv3nuh@sisian.am: